ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Կոտայքի մարզ գ.Արամուս, Հեռ. (0222) 6-01-57,
(0222) 6-44-10

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

441

24 սեպտեմբերի 2020թ..

Հարգարժան պարոն Ավետիսյան.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջների՝ Ձեզ ենք ներկայացնում Արամուս համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր՝ 38 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ *ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ*

Կատարող՝ Սամվել Նիկողոսյան 0222-6-01-57

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"13" օգոստոսի 2020 թվականի N 238

ԱՐԱՄՈՒՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒՄԸ ՉԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Չնակերպել Արամուսի համայնքապետարանի կողմից իրականացված Ջրմուղի փողոցի մի հատվածի գազատար խողովակի շինարարության շահագործման փաստագրումը (շինարարության շահագործման փաստագրման ակտը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"13" օգոստոսի 2020 թվականի N 239

ԱՐԱՄՈՒՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԱՐՈՒՍՅԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 1419 ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետերի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի, "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արամուսի համայնքապետարանի ու Արուսյակ Խաչատուրի Մխիթարյանի միջև 2003 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված N 1419 վարձակալության պայմանագրի 6.6 կետը՝ *որոշում եմ.*

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամուսի համայնքապետարանի և Արուսյակ Խաչատուրի Մխիթաքրյանի միջև 2003 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված N 1419 վարձակալության պայմանագրի 6.6 կետով նախատեսված է, որ պայմանագիրը վարձատուի կողմից կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել եթե, վարձակալը 3 ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը, իսկ Արուսյակ Մխիթարյանը 2017 թվականից մինչ օրս չի վճարել հողամասի վարձակալության տարեկան վարձավճարները, ուստի լուծարել Արամուսի համայնքապետարանի ու Արուսյակ Խաչատուրի Մխիթարյանի միջև 2003 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված N 1419 վարձակալության պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"17" օգոստոսի 2020 թվականի N 240

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԵՐԳԻՆԵ ԵՎ ԲԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության "Քաղաքացիական օրենսգրքի" 188-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջները՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Տիգրանաձորի 27 հասցեում գտնվող, քաղաքացիներ Վերգինե Համբարձումի և Բենիկ Օնիկի Սարգսյաններին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-013-0030-0009 կադաստրային ծածկագրով հողամասում (վկայական N 17012020-07-0142) իրենց կողմից ինքնակամ կառուցված 409,48քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 40,37քմ արտաքին մակերեսով թոնրատունը, 2,44քմ արտաքին մակերեսով զուգարանը և 28,98քմ մակերեսով պարիսպը՝ համարել օրինական:

2.Պարտավորեցնել քաղաքացիներ Վերգինե Համբարձումի և Բենիկ Օնիկի Սարգսյաններին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105205216 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ բնակելի տան մեկ քառակուսի մետրի համար 1300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ, իսկ թոնրատան, զուգարանի և պարսպի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ: Բնակելի տան ընդհանուր արտաքին մակերեսը 409,48քմ է, որի օրինականացման արժեքը կազմում է 532324 (հինգ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսանչորս) դրամ, իսկ թոնրատան, զուգարանի և պարսպի ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 71,79քմ, որոնց օրինականացման արժեքը կազմում է 55997(հիսունհինգ հազար ինը հարյուր իննսունյոթ) դրամ:

3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պետական գրանցման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"17" օգոստոսի 2020 թվականի N 241

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԻՆԵ ՀԱՄՐԱԹՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ գլխի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Մարինե Դերենիկի Հասրաթյանին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող 07-013-0011-0020 կադաստրային ծածկագրով հողամասը և շինությունները բաժանել մասերի /համաձայն հատակագծերի/, առանձնացված հատված S1 և առանձնացված հատված S2

1) Առանձնացված հատված S1-ի հասցե տրամադրել՝ Կոտայքի մարզի Արամուս համայնքի Կենտրոնական փողոց 34/1 հասցեն:

2) Առանձնացված հատված S2-ի հասցե տրամադրել՝ Կոտայքի մարզի Արամուս համայնքի Կենտրոնական փողոց 34 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"17" օգոստոսի 2020 թվականի N 242

ՍԱՍՈՒՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 4-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Սասուն Հայրիկի Սիմոնյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ Արամուս համայնքի Անկախության 6-րդ փողոց 7 հասցեում գտնվող 07-013-0006-0014 կադաստրային ծածկագրով հողամասում բնակելի տան և պարսպապատման նախագծային փաստաթղթեր մշակելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"17" օգոստոսի 2020 թվականի N 243

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԺԵՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 100000/մեկ հարյուր հազար/ դրամը փոխանցել «Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցին՝ Գոռ Պետրոսի Պետրոսյանի բուժման արժեք:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Թ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"18" օգոստոսի 2020 թվականի N 244

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Կոտայքի մարզի Արամուս համայնքի ղեկավարի 2007 թվականի հունվարի 19-ի "Կոտայքի մարզի Արամուսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին" N 1 որոշմամբ հաստատված 4-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Դ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

Հավելված 4
22 Կոտայքի մարզի
Արամուսի համայնքի ղեկավարի
2020 թ. օգոստոսի 18-ի N 244 որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

3.1-1

(ծածկագիրը)

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուսի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ աշխատակազմ) առաջատար մասնագետի (այսուհետ՝ առաջատար մասնագետ) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբում:

2. Առաջատար մասնագետին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

II ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Առաջատար մասնագետը անմիջականորեն ենթակա է հաշվետու է քարտուղարին:

2. Առաջատար մասնագետը իրեն ենթակա աշխատողներ չունի:

3. Առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի առաջին կարգի մասնագետը՝ քարտուղարի հայեցողությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում առաջատար մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Առաջատար մասնագետը աշխատակազմի առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրան՝ քարտուղարի հայեցողությամբ:

4. Առաջատար մասնագետը՝

1) աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է քարտուղարի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Առաջատար մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

IV.ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

1. Առաջատար մասնագետը՝

1) աշխատակազմի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում,

2) աշխատակազմի աշխատողների և պաշտոնատար անձանց հետ շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ՝ իր լիազորությունների շրջանակներում,

3) աշխատակազմից դուրս շփվում է քարտուղարի հանձնարարությամբ

4) աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Առաջատար մասնագետը՝

1) քարտուղարի հանձնարարությամբ, մասնակցում է խնդիրների լուծմանը և գնահատմանը.

2) բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Առաջատար մասնագետը՝

1) ունի առնվազն միջնակարգ կրթություն.

2) ունի «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական տուրքերի մասին», «Հողի հարկի մասին», «Գույքահարկի մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն՝

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

5) տիրապետում է ռուսերենին կամ մեկ այլ օտար լեզվի:

VII.ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Առաջատար մասնագետը՝

1) կատարում է քարտուղար հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

2) ապահովում է համայնքապետարանի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

3) հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին.

4) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

5) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ քարտուղարի մոտ ընդունելության համար.

6) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքապետարանի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

7) քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

8) վարում է գույքային հարկերի բազաները, կատարում է անշարժ գույքի սեփականատերերի ամենամսյա փոփոխություններ.

9) իրականացնում է իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքային հարկերի հաշվառումը, իրավաբանական անձանց հայտարարագրերի գրանցումը, քարտերի վարումը.

10) իրականացնում է ծանուցագրերի տրամադրման, տեղական հարկերի գանձման աշխատանքները, կազմում ամփոփները և սահմանված կարգով հանձնում համակարգողին.

11) իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող վարձակալությամբ տրամադրված հողերի, համայնքի

սեփականություն համարվող վարձակալությամբ տրամադրված գույքի հաշվառումը, ապահովում է վարձակալական վճարների գանձումը,

12) աջակցում է տեղական տուրքերի և վճարների գանձման աշխատանքներին.

13) . իրականացնում է համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների գանձման աշխատանքները.

14) իրականացնում է բարեվարքության հարցերով կազմակերպչի պարտականությունները.

ա) հանրային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

բ) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

գ) համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.

դ) մշակում է հանրային ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում տվյալ մարմնում հաստատման.

ե) վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն:

15) քարտուղարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.

16) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

VIII. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

1. Առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության առաջին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"18" օգոստոսի 2020 թվականի N 245

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆՈՒՇ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. Անհատ ձեռնարկատեր Անուշ Հայրապետյանին Տիգրանաձորի խճուղի 4/4/3 հասցեում՝ 60քմ քարե շինության ներսում, տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի երրորդ եռամսյակի համար՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"21" օգոստոսի 2020 թվականի N 246

ՀԱՄԱՅՆՔԻ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 90 որոշումը՝ *որոշում եմ.*

1. Համայնքի 1-ին կարգի հաշմանդամներին՝ թվով 15 հոգու, բյուջեով նախատեսված սոց. օգնության ֆոնդի 4729 հոդվածից 2020 թվականի հուլիս ամսվա համար տալ 75000 /յոթանասունհինգ հազար/ դրամ ֆինանսական օգնություն՝ յուրաքանչյուրին 5000 /հինգ հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՁ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

Հավելված
Հաստատված ՀՀ Կոտայքի մարզի
Արամուս համայնքի ղեկավարի
2020թ. հուլիսի 21-ի N 246 որոշման

հ/հ	*Անուն, ազգանուն*	*Գումար/դրամ/*
	1-ին կարգի հաշմանդամներ	
1	Սարգսյան Քաջիկ Կ.	5000 /հինգ հազար/ դրամ
2	Միլիտոսյան Արևիկ Ա.	5000 /հինգ հազար/ դրամ
3	Մարգարյան Սամվել Հ.	5000 /հինգ հազար/ դրամ
4	Շմավոնյան Ռուբեն Թ.	5000 /հինգ հազար/ դրամ
5	Յոլչյան Ավետիք Ն.	5000 /հինգ հազար/ դրամ
6	Հայրապետյան Գուրգեն	5000 /հինգ հազար/ դրամ
7	Գրիգորյան Մարինե	5000 /հինգ հազար/ դրամ
8	Սարգսյան Նունե	5000 /հինգ հազար/ դրամ
9	Ղազարյան Կոլյա	5000 /հինգ հազար/ դրամ
10	Խաչատրյան Նարինե Կ.	5000 /հինգ հազար/ դրամ
11	Նազարյան Սեդա	5000 /հինգ հազար/ դրամ
12	Հակոբյան Գարեգին	5000 /հինգ հազար/ դրամ
13	Հայրապետյան Էդգար	5000 /հինգ հազար/ դրամ
14	Հովհաննիսյան Հայկ	5000 /հինգ հազար/ դրամ
15	Նազարյան Սեդա	5000 /հինգ հազար/ դրամ
	Ընհամենը՝ 75000 /յոթանասունհինգ հազար/ դրամ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"24" օգոստոսի 2020 թվականի N 247

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԻԿ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԺԵՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 70000/յոթանասուն հազար/ դրամը փոխանցել "ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ" բժշկական կենտրոն ՓԲԸ-ին՝ Արմիկ Օնիկի Սերոբյանին բուժման արժեք:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ա/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"24" օգոստոսի 2020 թվականի N 248

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Սույն թվականի օգոստոսի 27-ին գումարել ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգային հարցերով.
   1) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
   2) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
   3) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն աճուրդային կարգով օտարելու մասին.
   4) Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 95 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"25" օգոստոսի 2020 թվականի N 249

"ԱՎԱԼՈՆ ՀՈԹԵԼ" ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. "ԱՎԱԼՈՆ ՀՈԹԵԼ" ՍՊԸ-ին Անկախության 1-ին փողոց 5/1 հասցեում՝ 135քմ հիմնական շինության ներսում, տալ հանրային սննդի կազմակերպման ու իրացման և ոգելից խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի երրորդ եռամսյակի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"25" օգոստոսի 2020 թվականի N 250

«ԱՐՄԵՆ ՀԱՄԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՀՁ» ՍՊԸ-ԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. «ԱՐՄԵՆ ՀԱՄԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՀՁ» ՍՊԸ-ին Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 1/1/2 հասցեում տալ 36մ² մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ 2020 թվականի հուլիս ամսվա համար՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Մ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"25" օգոստոսի 2020 թվականի N 251

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԺԵՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 360000/երեք հարյուր վաթսուն հազար/ դրամը փոխանցել "ԻՆՄԵԴ" ՍՊԸ-ին՝ Գոհար Նորիկի Վարդանյանին բուժման արժեք:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀՀ ՄԱՐԶ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *03502169*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"28" օգոստոսի 2020 թվականի N 252

ՍԱՍՈՒՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Թույլատրել Սասուն Հայրիկի Սիմոնյանին Արամուս համայնքի Անկախության 6-րդ փողոց 7 հասցեում գտնվող 07-013-0006-0014 կադաստրային ծածկագրով հողամասի վրա կատարել բնակելի տան և պարսպապատման աշխատանքներ:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"28" օգոստոսի 2020 թվականի N 253

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԱՅՐԻԿ ԵՎ ԳԱՅԱՆԵ ՍԻՄՈՆՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության "Քաղաքացիական օրենսգրքի" 188-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջները՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Անկախության 5-րդ փողոց 37 հասցեում գտնվող, քաղաքացիներ Հայրիկ Վանիկի և Գայանե Վալոդի Սիմոնյաններին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-013-0005-0001 կադաստրային ծածկագրով հողամասում (վկայական N 05042016-07-0028) իրենց կողմից ինքնակամ կառուցած 106,75քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 19,85քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և 5,56քմ մակերեսով պարիսպը՝ համարել օրինական:

2.Պարտավորեցնել քաղաքացիներ Հայրիկ Վանիկի և Գայանե Վալոդի Սիմոնյաններին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105205216 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ բնակելի տան մեկ քառակուսի մետրի համար 1300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ, իսկ օժանդակ շինության և պարսպի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ: Բնակելի տան ընդհանուր արտաքին մակերեսը 106,75քմ է, որի օրինականացման արժեքը կազմում է 138775 (մեկ հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) դրամ, իսկ օժանդակ շինության և պարսպի ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 25,41քմ, որոնց օրինականացման արժեքը կազմում է 19820(տասնիններ հազար ութ հարյուր քսան) դրամ:

3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"28" օգոստոսի 2020 թվականի N 254

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ գլխի 29-րդ կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Լուծարել ԿՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով բաց մրցույթի միջոցով Արամուս համայնքի կարիքների համար Արամուս համայնքում մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքների 2-րդ փուլի ձեռքբերման նպատակով ձևավորված գնահատող հանձնաժողովը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"02" սեպտեմբերի 2020 թվականի N 255

ԱՐԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ՌՈՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Արամ Մարգարյանի և Ռոման Եղիազարյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Արամ Ռուբիկի Մարգարյանին և Ռոման Հովհաննեսի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող 07-013-0161-0094 կադաստրային ծածկագրով 3.85944 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրը (վկայական N 01092020-07-0128) համարել համայնքային սեփականություն, կատարել պետական գրանցում և փոփոխությունները ընդգրկել ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"03" սեպտեմբերի 2020 թվականի N 256

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 4-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ Արամուս համայնքի մի շարք փողոցներում ջրամատակարարման ցանցի վերակառուցման նախագծային փաստաթղթեր մշակելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"04" սեպտեմբերի 2020 թվականի N 257

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ու "Համայնքային ծառայության մասին" օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2020 թվականի օգոստոսի 26-ի N 325-Ա որոշումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնքի ղեկավարի 2013 թվականի մայիսի 20-ի "Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով ստեղծելու մասին" N 84 որոշման մեջ «Տիգրան Գեղամյան» բառերը փոխարինել համապատասխանաբար «Հարություն Ալեքսանյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"04" սեպտեմբերի 2020 թվականի N 258

ԱՐԱՄՈՒՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Թույլատրել Արամուսի համայնքապետարանին Արամուս համայնքի Երիտասարդական 8-րդ, 9-րդ և 10-րդ փողոցներում կատարել գազաֆիկացման աշխատանքների շինարարություն:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"08" սեպտեմբերի 2020 թվականի N 259

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՐԵԳԻՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԺԵՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 52360/հիսուներկու հազար երեք հարյուր վաթսուն/ դրամը փոխանցել "Վ. Նիկողոսյան" Ա/Ձ-ին՝ Գարեգին Գեղամի Հակոբյանին բուժման արժեք:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"08" սեպտեմբերի 2020 թվականի N 260

ԹԱԹՈՒԼ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 4-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Թաթուլ Զախարի Մնացականյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 1/7 հասցեում գտնվող 07-013-0002-0021 կադաստրային ծածկագրով հողամասում ռեստորանային համալիրի նախագծային փաստաթղթեր մշակելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"08" սեպտեմբերի 2020 թվականի N 261

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆՈՒՇ ԽՄՈՅԱՆԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Պարետի N 3//56-2020 ցուցումը՝ *որոշում եմ.*

1. Համայնքի բյուջեից՝ Անուշ Սամվելի Խմոյանին, տալ սննդամթերքի և սանիտարահիգենիկ պարագաների օգնություն՝ 25000 (քսանհինգ հազար) դրամի չափով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"09" սեպտեմբերի 2020 թվականի N 262

«ԱՐՄԵՆ ՀԱՄԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՀՁ» ՍՊԸ-ԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. «ԱՐՄԵՆ ՀԱՄԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՀՁ» ՍՊԸ-ին Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 1/1/2 հասցեում տալ 36մ² մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ 2020 թվականի օգոստոս ամսվա համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"15" սեպտեմբերի 2020 թվականի N 263

ՄԱՐՏԻԿ ԻՍԱՂՈՒԼՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Թույլատրել Մարտիկ Հարությունի Իսաղուլյանին Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղիում կատարել խմելու ջրի ջրագծքի անցկացման աշխատանքներ:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"16" սեպտեմբերի 2020 թվականի N 264

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԱՐԳԻՍ ՍՄԲԱՏՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՐԳԻՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ և 154-րդ հոդվածների պահանջները՝ *որոշում եմ.*

1. Քաղաքացիներ Սարգիս Լուկաշի Սմբատյանին և Սարգիս Գարիկի Մկրտչյանին ենթարկել վարչական տույժի՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով՝ Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող՝ իրենց սեթականության իրավունքով պատկանող 07-013-0136-0024 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:
2. Սարգիս Լուկաշի Սմբատյանին և Սարգիս Գարիկի Մկրտչյանին ենթարկել վարչական տույժի՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամի չափով՝ Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող՝ իրենց սեփականության իրավունքով պատկանող 07-013-0136-0024 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասում ինքնակամ շինարարություն կատարելու համար (օժանդակ շինություն և ջերմատուն):
3. Պարտավորեցնել քաղաքացիներ Սարգիս Լուկաշի Սմբատյանին և Սարգիս Գարիկի Մկրտչյանին Արամուսի համայնքապետարանի 900105205109 հաշվեհամարին վճարել 300000 (երեք հարյուր հազար) դրամ:
4. Պարտավորեցնել քաղաքացիներ Սարգիս Լուկաշի Սմբատյանին և Սարգիս Գարիկի Մկրտչյանին սույն որոշումը ստանալուց 15 օրվա ընթացքում ներկայանալ Արամուսի համայնքապետարան իրենց կողմից ինքնակամ կառուցված՝ վերը նշված շինությունները օրինականացնելու համար, հակառակ դեպքում հարցին կտրվի օրենքով սահմանված համապատասխան ընթացք:
5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"16" սեպտեմբերի 2020 թվականի N 265

ԱՐԱՄՈՒՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Թույլատրել Արամուսի համայնքապետարանին Արամուս համայնքի Անկախության 4-րդ, 5-րդ փողոցներում և Տիգրանաձորի խճուղի 3-րդ փակուղում կատարել գազաֆիկացման աշխատանքների շինարարություն:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"16" սեպտեմբերի 2020 թվականի N 266

«Ա. Ա. Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. «Ա. Ա. Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ին Արամուս համայնքի Անկախության 1-ին փողոց 5/7 հասցեում տալ 2մ² մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ 2020 թվականի համար.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"16" սեպտեմբերի 2020 թվականի N 267

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՒՆԵ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. Անհատ ձեռնարկատեր Նունե Բարեղամյանին Տիգրանաձորի խճուղի 66 հասցեում՝ 78քմ քարե շինության ներսում, տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի երրորդ եռամսյակի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"16" սեպտեմբերի 2020 թվականի N 268

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի 33-րդ կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 07-013-0222-ից կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0,05055հա արդյունաբերական օբյեկտների հողամասի հասցե համարել՝ Կոտայքի մարզի Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 3-րդ նրբանցք 8 հասցեն:

2. Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 3-րդ նրբանցք 8 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 07-013-0222-ից կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0,05055հա արդյունաբերական օբյեկտների հողամասում «ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից ինքնակամ կառուցված բոլոր շինությունները համարել օրինական և ճանաչել ՀՀ Կոտայքի մարզի Արամուս համայնքի սեփականությունը:

3. Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 3-րդ նրբանցք 8 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 07-013-0222-ից կադաստրային ծածկագրով 0,05055հա հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ արդյունաբերական օբյեկտների:

4.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 3-րդ նրբանցք 8 հասցեում գտնվող գույքի նկատմամբ Արամուս համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"18" սեպտեմբերի 2020 թվականի N 269

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՂԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀԱՐԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Թույլատրել Գեղամ Ժորայի Աթանեսյանին Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 42 հասցեում գտնվող 07-013-0055-0001 կադաստրային ծածկագրով հողամասում կատարել բարեկարգման և հարթեցման աշխատանքներ:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"22" սեպտեմբերի 2020 թվականի N 270

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության "Քաղաքացիական օրենսգրքի" 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիս 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Աշոտ Զոհրաբյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Երիտասարդական 6-րդ փողոց 26 հասցեում գտնվող, Աշոտ Բադիլի Զոհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող 07-013-0043-0005 կադաստրային ծածկագրով 0,08 հա հողամասում իր կողմից ինքնակամ կառուցված 407,85քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (համաձայն հատակագծի), 30,72քմ մակերեսով պարիսպը և 10,27քմ մակերեսով հենապատը համարել օրինական:

2. Քանի որ ինքնակամ կառուցված շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ օրինականացման համար գումար չգանձել:

3. Ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"22" սեպտեմբերի 2020 թվականի N 271

ՀՈՎԻԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխի 32-րդ կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Քաղաքացի Հովիկ Երջանիկի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող 07-013-0005-0038 և 07-013-0005-0037 կադաստրային ծածկագրերով հողամասերի միավորման արդյունքում առաջացած գույքի հասցե համարել Կոտայքի մարզի Արամուս համայնքի Անկախության 4-րդ փողոց 34-36 հասցեն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ